

## Համարատուութիւն

ԳՀ-ն կը կառավարուի 9 հոգինոց ընտրովի եւ անվճար մարմնի մը կողմէ: Անոր հաշուետու յանձնախումբերու անդամները, որակեալ եւ անվճար կամաւորներ են: Խնամակալ մարմինը կ'ընտրուի ԳՀ-ի նուիրատու անդամներուն կողմէ, ԳՀ-ի եւ Հայ Կեդրոնի կողմէ միասնաբար առաջարկուած թեկնածուներու ցանկէն, երեք տարուան տեւողութեան համար:

ԳՀ-ի անդամները անոր նուիրատուներն են, հետեւաբար, Մարմինը ամբողջովին հաշուետու է հիմնադրամին նուիրատու անդամներուն: ԳՀ-ն կը շեշտէ նիւթական բացարձակ համարատուութիւն եւ հոգատար վերաբերմունք հիմնադրամի գումարներուն նկատմամբ: Նիւթական տեղեկագիրը ամէն տարի կը քննուի հաշուպահական ընկերութեան մը կողմէ եւ տրամադրելի է իր անդամներուն եւ հասարակութեան:

